# ՅՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/12**

ք. Երևան «15» «04» 2020 թ.

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը իդեմս տնօրենի պաշտոնակատար Ռ. Ոսկանյանի, որըգործումէ պետական հիմնարկի կանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Պատվիրատու), միկողմից, և«ԷԼԻՏ ԷՄՎԷ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավտոմեքենաների վերանորոգման մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ նպահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործընթացի ընթացքում [illegible]

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 196200 (հարյուր ինսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

...այմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից ...յուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն ...ցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ...առայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներեն երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[23]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ության օգտագործմանպահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան անագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց և ռնվազն 5 ացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված____ էջից, կնքվում է երկուօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույնպայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**ՀՀ ՇՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ**

ք.Երևան, Արմենակյան 129

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011064087

ՀՎՀՀ 01573524

ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենիպաշտոնակատար

*Ռ. Ռսկանյան*

-----------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ**

ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն.30

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 15700 30407870200

ՀՎՀՀ 00465342

«ԷԼԻՏԷՍՎԷ» ՍՊԸ-ի տնօրեն

**Ս. Մկրտչյան**

-----------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 1*
*«15» 04 2020 թ. կնքված*
*ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 50111130/1 | Ներկայացվում է Աղյուսակ 1-ում | դրամ | 196200 | 1 | ՀՀ ԾՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ ք.Երևան, Արմենակյան 129 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2020 |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը:*

Աղյուսակ 1

| h/h | Ծառայության անվանումը | Համառոտ բնութագիրը | Գինը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 5 |
| 1 | NISSAN X-TRAIL 2.5L, 2011թ. VIN - JN1TANT31Z01000435 ավտոմեքենայի վերանորոգման | 1.Բռնկման համակարգի ստուգում/ Проверкасистемызажигания | 1000 |
| | | 2. Սառեցման համակարգի ստուգում/Проверкасистемыохлаждения | 1000 |
| | | 3. Յուղման համակարգի ստուգում/ Проверкамасляннойсистемы | 1000 |
| | | 4. Արտածծման համակարգի ստուգում/ Проверкавыхлопнойсистемы | 1000 |
| | | 5. ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում/ Проверкаработы EMP | 1000 |
| | | 6. Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում/ Проверкаработыуниверсальногоперевода | 1000 |
| | | 7. Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում/ Проверкаработыкоробкипередач | 1000 |
| | | 8. Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում/Проверкапереднихизаднихмостов | 1000 |
| | | 9. Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում/ Проверкаработыпереднихизаднихподвесок | 1000 |
| | | 10. Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում/Проверкаработитормознойсистемы | 1000 |
| | | 11. ABS համակարգի ստուգում/ Проверкасистемы ABS | 1000 |
| | | 12. Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում/Проверкаработоиэлектрическойсистемы | 1000 |
| | | 13. Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում/Проверкаработиуправления | 1000 |
| | | 14. Թափքի վիճակի ստուգում/ Проверкасостояниекузова | 1000 |
| | | 15. Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում/ Проверкакачестваиуровнямасларазныхагрегатов | 1000 |
| | | 16. Շարժիչի հանում և տեղադրում/Снятиеиустановкадвигателя | 150000 |

| | | |
|---|---|---|
| ություններ | 17. Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում/Снятиеиустановкаподушкидвигателя | 10000 |
| | 18. Բաշխիչլիսեռի կափարիչի հանում և տեղադրում/Снятиеиустановкакрышкираспредвала | 15000 |
| | 19. Շարժիչի գլխիկի վերանորոգում/ Ремонтголовкидвигателя | 50000 |
| | 20. Փականի խցուկի փոխարինում/Заменапрокладкиклапана | 7000 |
| | 21. Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում/Снятиеиустановкараспределительноговала | 10000 |
| | 22. Բաշխիչ լիսեռիխցուկի փոխարինում/Заменапрокладкираспределительноговала | 15000 |
| | 23. Գրիչների փոխարինում / Заменатолкотелов | 30000 |
| | 24. Ատամնավոր փոկի փոխարինում/Заменазубчатогоремня | 45000 |
| | 25. Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում/Заменапереднегосальникаколенневала | 25000 |
| | 26. Ծնկաձև լիսեռիհետևիխցուկի փոխարինումЗаменазаднегосальникаколенневала | 50000 |
| | 27. Մխոցային օղակների փոխարինում/ Заменакольцацилиндров | 100000 |
| | 28. Թափանիվի հանում և տեղադրումСнятиеиустановкамаховогоколеса | 5000 |
| | 29. Յուղի և յուղի զտիչի փոխարինում/Заменамаслаимасляногофильтра | 30000 |
| | 30. Յուղիպոմպի փոխարինում/Заменамасляногонасоса | 45000 |
| | 31. Բռնկման կարգավորում /Настройказажигания | 5000 |
| | 32. CO կարգավորում/регулированиеCO | 1000 |
| | 33. Օդի զտիչի փոխարինում/Заменавоздушногофильтра | 10000 |
| | 34. Ինժեկտորների փոխարինում/Заменаинжекторовдвигателя | 20000 |
| | 35. Ինժեկտորի մաքրումЧисткаинжекторовдвигателя | 20000 |
| | 36. Բենզամղիչի փոխարինում/ Заменабензанасоса | 35000 |
| | 37. Վառելիքի զտիչի փոխարինում/Заменатопливногофильтра | 30000 |
| | 38. Վառելիքի բաքի հանում և տեղադրում/Снятиеиустановкатопливногобака | 5000 |
| | 39. Հովհարի հանում և տեղադրում/Снятиеиустановкавентилятора | 10000 |
| | 40. Ռադիատորի հանում և տեղադրում/Снятиеиустановкарадиатора | 10000 |
| | 41. Ռադիատորի վերանորոգում/Ремонтрадиатора | 50000 |
| | 42. Թերմոստատի փոխարինում/ Заменатермостата | 20000 |
| | 43. Ջրի պոմպի փոխարինում/Заменаводяногонасоса | 30000 |
| | 44. Ընդարձակող բաքի փոխարինում/Заменарасширительногобачка | 20000 |
| | 45. Խլացուցիչիհանումևտեղադրում/Снятиеиустановкаглушителя | 1000 |
| | 46. Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում/ Снятиеиустановкашлангарадиатора | 5000 |
| | 47. ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում/Снятиеиустановкапреобразователейкоробкипередачавтомобиля | 20000 |

| | |
|---|---|
| 48. ԱՓՏ-ի հանում և տեղադրում/Снятиеиустановкакоробкипередачавтомобиля | 100000 |
| 49. ԱՓՏ-ի վերանորոգում/ремонткоробкипередачавтомобиля | 300000 |
| 50. ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում/Заменамасляногофильтракоробкипередачавтомобиля | 100000 |
| 51. Առջևի կամ հետևի կամրջակիվերանորոգում/ремонтпереднихилизаднихмостов | 50000 |
| 52. Կիսասռնու առանցքակալի փոխարինում/заменаподшипникапалоса | 20000 |
| 53. Անվակունդի փոխարինում/ Заменаступицыколеса | 30000 |
| 54. Ցնցամեղմիչի զսպանակի փոխարինում/ заменапружиныамортизатора | 20000 |
| 55. Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում/Заменапереднегоамортизатора | 75000 |
| 56. Գնդե հոդակապերի փոխարինում/ Заменашаровыхопор | 15000 |
| 57. Ծայրակների փոխարինում /Заменаконцовкирулевыхтяг | 15000 |
| 58.Հետևի ցնցամեղմիչի փոխարինում/Заменазаднегоамортизатора | 75000 |
| 59.Կայունարարի կանգնակների փոխարինում/Заменастойкистабилизатора | 15000 |
| 60.Անվաբացքի կարգավորում/установкаразвала | 10000 |
| 61.Ղեկային կալունի վերանորոգում/ Ремонтрулевойколонки | 60000 |
| 62.Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգում/ремонтгидравлическогонасоса | 50000 |
| 63.Վակուումային ուժեղարարի վերանորոգում/ремонтвакуумногоусилителя | 50000 |
| 64.Առջևի սուպպորտի վերանորոգում/Ремонтпередногосуппорта | 10000 |
| 65.Հետևիսուպպորտի վերանորոգում/Ремонтзадногосуппорта | 10000 |
| 66.Արգելակման փողրակի փոխարինում/ Заменатормозногошланга | 20000 |
| 67.Առջևի արգելակման կոճղակների փոխարինում/Заменапереднихтормозныхколодок | 30000 |
| 68.Հետևի արգելակման կոճղակների փոխարինում/Заменазаднихтормозныхколодок | 30000 |
| 69.Առջևի արգելակմանսկավառակի փոխարինում/Заменапереднихтормозныхдисков | 45000 |
| 70.Հետևի արգելակման սկավառակի փոխարինում/Заменазаднихтормозныхдисков | 45000 |
| 71.ABS-ի վերանորոգում/РемонтсистемаABS | 30000 |
| 72.Ձեռքի արգելակի ճոպանի փոխարինում/заменатросаручноготормоза | 20000 |
| 73.Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում/ремонтмеханизмаручноготормоза | 20000 |
| 74.Գեներատորի վերանորոգում/Ремонтгенератора | 70000 |
| 75.Մեկնարկիչի վերանորոգում /Ремонтстартера | 70000 |
| 76.Առջևի լապտերի հանում և տեղադրում/Снятиеиустановкапереднегофонаря | 5000 |

| | | | |
|---|---|---|---|
| | | 77.Հետևի լապտերի հանում և տեղադրում/Снятиеиустановказаднегофонаря | 5000 |
| | | 78.Բռնկման կողպեքի հանում և տեղադրում/Снятиеиустановказамказажигания | 5000 |
| | | 79.Արագաչափի հանում և տեղադրում/Снятиеиустановкаспидометра | 5000 |
| | | 80.Ձայնայինազդանշանիվերանորոգում/ ремонтзвукогосигнала | 5000 |
| | | 81. Դռների կենտրոնական փականի վերանորոգում/ремонтцентральногозамкадверей | 10000 |
| | | 82.Վառոցքային լարերի հանում և տեղադրում/заменапроводовсвечизажигания | 5000 |
| | | 83.Էլեկտրական տվիչների փոխարինում/Заменаэлектрическихдатчиков | 20000 |
| | | 84.Էլեկտրական անջատիչների փոխարինում/Заменаэлектрическихвыключателей | 20000 |
| | | 85.Վառոցքի մոմերի փոխարինում/Заменасвечейзажигания | 35000 |
| | | 86.Կոնդիցիոների լիցքավորում/Заправкакондиционера | 30000 |
| | | 87.Կոնդիցիոների վերանորոգում/ремонткондиционера | 30000 |
| | | 88. Ավտոմեքենայի լվացում/Автомойка | 6000 |
| | | 89.Անիվի հանում և տեղադրում/Снятиеиустановкаколес | 2000 |
| | | 90.Անվադողի վերանորոգում/Ремонтшин | 2000 |
| | | 91. Անիվի բալանս/БалансировкаКолеса | 2000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ՇՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ**
ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011064087
ՀՎՀՀ 01573524
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենիպաշտոնակատար
*Ռ. Ռսկանյան*

----------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ**
ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն.30
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 30407870200
ՀՎՀՀ 00465342
«ԷԼԻՏԷՍՎԵ» ՍՊԸ-ի տնօրեն
**Ս. Մկրտչյան**

----------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N ...
«15» 04 2020
ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/12 ծածկագրով պայմ...

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ապրանքի անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/1 | Ավտոմեքենաների վերանորոգում | 58860 | 58860 | 58860 | 137340 | 137340 | 137340 | 196200 | 196200 | 196200 | 196200 |

...րամները թակագումարներըներկայացվում են աճողականկարգով:
...արումը կատարվելու է ըստ մատուցված ծառայության, հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ՇՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ
ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011064087
ՀՎՀՀ 01573524
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենիպաշտոնակատար
*Ռ. Ռսկանյան*

---------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԷԼԻՏ ԷՍՎԷ» ՍՊԸ**
ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն.30
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 30407870200
ՀՎՀՀ 00465342
«ԷԼԻՏԷՍՎԷ» ՍՊԸ-իտնօրեն
Ս. Մկրտչյան

---------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

***Հավելված 3***
***«        »               2020 թ. կնքված***
***ծածկագրով պայմանագրի***

Պայմանագրիկողմ

______________________________

______________________________

գտնվելուվայրը ______________

հհ ____________________

հվհհ ____________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելուվայրը ______________

հհ____________________

հվհհ____________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «          »20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրիհամարը՝ __________

ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ «   » «        » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցվածծառայություններ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | **Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/** | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | **փաստացի** | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրությաներկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________

ստորագրություն

______________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________

ստորագրություն

______________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«    »    2020 թ. կնքված*
*ծառայության պայմանագրի*

# ԱԿՏ

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

**Ընդունեց**

Հ այտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

**Հավելված 5.1**
**«ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/12» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «»____________________ 20 թ.

«Էլիտ ԷսՎԷ» ՍՊԸ-ն,իդեմստնօրեն Ս. Մկրտչյանի (Անձ. AG0453763 տրվ. 2005-04-19, 011-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**3. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <u>ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/12</u> ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետքէ տեղեկացնի Պատվիրատուին՝գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**4. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

«Էլիտ ԷսՎե» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն.30
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 00465342
Տնօրեն՝______________Ա. Մկրտչյան
Կ.Տ

Օր/ամիս/տարի

## ՎՃԱՐՄԱՆՊԱՀԱՆՋԱԳԻՐ

...րվ

...	Ներկայացմանամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝«Էլիտ ԷսՎԷ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝«Ամերիաբանկ» ՓԲԸ

6. Վճարողիհաշվիհամարը՝ 1570030407870200

7. ՎճարողիՀՎՀՀ՝ 00465342

8. ՎճարողիՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ***Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ***

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. ՇահառուիՀՎՀՀ՝ **01573524**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

13.Շահառուիհաշվիհամարը (հշ.N)900011064087

14.Գումարը(թվերովկբառերով)՝ 19620(տասնինը հազար վեց հարյուր քսան)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերովկբառերով)(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերովկկոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանցհամարները,պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ.<br>Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

**Հավելված 4.1**
**«ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/12» ծածկագրով**
**գնանշման հարցումի հրավերի**

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(որակավորման ապահովում)

ք. Երևան «»___________________ 20 թ.

«Էլիտ ԷսՎԷ» ՍՊԸ-ն,իրեմստնօրեն Ս. Մկրտչյանի (Անձ. AG0453763 տրվ. 2005-04-19, 011-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. **Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, **Բանկից անկախ** պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին **գումարը չվճարվելու դեպքում**, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները **փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ** Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի **մեջ են մտնում Ընկերության կողմից** վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից **կնքվելիք պայմանագրով ստանձնվող** պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան **հաջորդող քսաներորդ աշխատանքային** օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Էլիտ ԷսՎԷ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն.30
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 00465342
Տնօրեն՝ ______________ Ա. Մկրտչյան
Կ.Տ

Օր/ամիս/տարի

## ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

րվ

Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ «Էլիտ ԷսՎԷ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

6. Վճարողիհաշվիհամարը՝ 1570030407870200

7. ՎճարողիՀՎՀՀ՝ 00465342

8. ՎճարողիՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. ՇահառուիՀՎՀՀ՝ **01573524**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

13.Շահառուիհաշվիհամարը (հշ.N)900011064087

14.Գումարը(թվերովևբառերով)՝ 196200 (հարյուր ինսունվեց հազար երկու հարյուր)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերովնբառերով)(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերովևկոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ ((որակավորման ապահովում *համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանցիհամարները,պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___"___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |